

«ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ, ՆՈՐ ՍՓՅՈՒՌԷ»

Posted on September 2, 2018 by Keghart



Category: [Opinions](#)



Համաժողովի Հայտարարությունը

Եվրոպայի Հայերի Համագումար, Գերմանիա, քաղաք Բյոլն, 2 սեպտեմբեր 2018

Հայաստանում Թավշյա համաժողովրդական հեղափոխությունը, վերջակետ դրեց ՀՀ անկախությանը և արցախյան փառահեղ ռազմական հաղթանակին հաջորդած քսանհինգ տարիների ընթացքում, հանրային հարստության թալանին, ընտրակեղծիքներին, հերթական կեղծ կոալիցիաներ ձևավորելու բեմականացումներին, նոր եւ լուսավոր հեռանկարներ խոստանալով ոչ միայն ՀՀ քաղաքացիներին, այլ նաեւ աշխարհով մեկ սփռված ողջ հայ ժողովրդին:



Փաստորեն, մինչև 2018 թ.-ի ապրիլը, կորցվեց ինքնակազմակերպվելու ու հզորանալու մոտ քսանհինգ թանկագին տարիների առիթը, չօգտագործվեց մեր տրամադրության տակ եղած հաղթաթղթերը և պետություն կերտելու փոխարեն՝ մսխվեց և օտարացվեց ինքնիշխանության ռեսուրսները, և համապատասխան քայլեր չձեռնարկվեց հակառակորդի կանխատեսելի, ռազմական և քաղաքական իրավիճակներից հաղթական դուրս գալու համար:

Համաժողովի Հայտարարությունը

Եվրոպայի Հայերի Համագումար, Գերմանիա, քաղաք Բյոլն, 2 սեպտեմբեր 2018

Հայաստանում Թավշյա համաժողովրդական հեղափոխությունը, վերջակետ դրեց ՀՀ անկախությանը և արցախյան փառահեղ ռազմական հաղթանակին հաջորդած քսանհինգ տարիների ընթացքում, հանրային հարստության թալանին, ընտրակեղծիքներին, հերթական կեղծ կոալիցիաներ ձևավորելու բեմականացումներին, նոր եւ լուսավոր հեռանկարներ խոստանալով ոչ միայն ՀՀ քաղաքացիներին, այլ նաեւ աշխարհով մեկ սփռված ողջ հայ ժողովրդին:



Փաստորեն, մինչև 2018 թ.-ի ապրիլը, կորցվեց ինքնակազմակերպվելու ու հզորանալու մոտ քսանհինգ թանկագին տարիների առիթը, չօգտագործվեց մեր տրամադրության տակ եղած հաղթաթղթերը և պետություն կերտելու փոխարեն՝ մսխվեց և օտարացվեց ինքնիշխանության ռեսուրսները, և համապատասխան քայլեր չձեռնարկվեց հակառակորդի կանխատեսելի, ռազմական և քաղաքական իրավիճակներից հաղթական դուրս գալու համար:

Հետևաբար, հաշվի առնելով վերոնշյալ իրողությունները և հիմք ունենալով

Հայաստանի հողի, սեփական ժողովրդի պատվի և անվտանգ կյանք ապրելու իրավունքը, և մեկնելով այն սկզբունքից, որ Թավշյա հեղափոխությունը ուղղակիորեն ազդում է ողջ հայության ճակատագրի վրա, և որ Սփյուռքը ունի իրավունք ու նաև պարտավորություն իր հնարավոր բոլոր միջոցներով զորակցելու և նպաստելու հայրենիքում ընթացող հարցերի լուծմանը, ուստի 2018 թվականի սեպտեմբերի 2-ին, Գերմանիայի Զյուլն քաղաքում, Եվրոպայի Հայերի Համագումարի (ԵՀՀ) «Նոր Հայաստան, Նոր Սփյուռք» խորագրով կազմակերպված համաժողովի մասնակիցները, հետևելով ՀՀ քաղաքացիների և Սփյուռքի լայն խավերի աջակցությունը վայելող Հայաստանի Հանրապետության նոր կառավարության ծրագրերին, հաստատում են հետևյալ դրույթները.

- Չորակցում ենք ժողովրդի միահամուռ պայքարի եւ հրապարակային ներկայության շնորհիվ հաղթանակած հեղափոխական կառավարության ջանքերին, որ հակառակ բազմաթիվ առարկայական և արհեստածին խոչընդոտների հաջողել է կարճ ժամանակահատվածում իրականացնել խորքային բարեփոխումներ, առանց երկրի տնտեսությանը ցնցում պատճառելու, քանդել կլանային և քրեածին համակարգի հիմքերը, ժողովրդին վերադարձնել սահմանադրականորեն երաշխավորված իշխանություն ձևավորելու իրավունքը, և ապագայի նկատմամբ հույս ու հավատքը, վարելով հավասարակշռված ներքին ու արտաքին քաղաքականություն, արմատավորելով երկրի իսկական անվտանգությունն ու ինքնիշխանությունը:
- Համոզված ենք, որ Հայաստանը տնտեսական բարգավաճման և ազգային հարստության վերաբաշխման նոր ժամանակաշրջան է թեւակոխել՝ որը հիմնված է իրավական սկզբունքների, սոցիալական արդարության, վրա: Այս ճանապարհին, սակայն կան բազում խոչընդոտներ եւ արգելակումներ, որոնցից հիմնականները ՀՀ քաղաքացիների կամարտահայտության ոտնահարմամբ ձևավորված ներկա Ազգային ժողովը եւ ժառանգված քրեաօլիգարխիկ դատաիրավական համակարգն են:
- Սթափության կոչ ենք ուղղում նախկին թալանիչ վարչախմբի մնացուկներին՝ ՀՀ-ին և իր բացահայտ ու թաքուն բոլոր գործընկեր կուսակցություններին և անհատներին հորդորելով նրանց դադարեցնել իրենց խոչընդոտող քայլերը, չչարաշահել հեղափոխության սիրո և համերաշխության պատգամը և մնալ օրինականության դաշտում:
- Հույս ենք հայտնում, որ պայմանավորված ժամանակամիջոցում և հնարավորինս արագացված տեմպով, տեղի կունենան խորհրդարանական արտահերթ ընտրություններ եւ երկրի զարգացման բնականոն ընթացքը կստանա հաստատուն եւ արագ երթ: Եվ միևն արդար ընտրություններով ժողովրդի իրական

Ներկայացուցիչների ներկայությունը ԱԺ-ում և դատաիրավական համակարգի առողջացումը և ցանկացած ընտրություն, այդ շարքում նաև Երևանի ավագանու ընտրությունները չպետք է դիտել լոկ այդ տիրություն, այլ Նոր և հին Հայաստանի պայքար-հակապայքար համատեքստում:

- Կոչ ենք ուղղում ՀՀ Նոր իշխանություններին, երկրի արտաքին գերատեսչություններում կատարել անհրաժեշտ փոփոխություններ, հետ կանչել հայկական Սփյուռքի ինքնակազմակերպմանը մինչ օրս խոչընդոտող դեսպաններին և դիվանագիտական ներակացուցիչներին և վերանայել ցայժմ Սփյուռքի անունով ներկայացող, բայց իրականության մեջ Սփյուռքի լայն խավերին անտեսող և արհամարող կառույցների հետ նախկին սխալ, շահադիտական ու հակազգային հարաբերությունը:
- Վստահ ենք, որ Սփյուռքը չի հաջողելու լիարժեք զորակցել ՀՀ պետականությանը, այնքան ժամանակ, քանի դեռ նրա կառույցները շարունակում են մնալ կոռումպացված և նեխած, և օգտագործվում են ոչ թե ՀՀ պետականության զորակցողի, այլ ՀՀ իշխանությունների քաղաքական մրցակիցների կողմից: Հետևաբար կոչ ենք ուղղում Սփյուռքի և առաջին հերթին Եվրոպայի մեր բոլոր հայրենակիցներին, կազմակերպություններին եւ կառույցներին տարածել եւ գործել համակարգված աշխատելու և ինքնակազմակերպման գաղափարը, որում ակնկալում ենք ՀՀ պետականության բարոյական նեցակցությունը:
- Հավատացած ենք, որ Հայաստան Սփյուռք խորքային և առողջ հարաբերությունները մնալու են անկատար և հայությունը չի կարող լինել միասնական, երբ ՀՀ անկախացումից արդեն ավելի քան քարորդ դար անց, հերթական պատրվակներով Հայ եկեղեցին շարունակում է մնալ երկփեղկված և Եկեղեցու մեկ հատվածը Սփյուռքում համահայկական իրավունքներին և շահերին ծառայելու փոխարեն, շարունակում է մնալ մեկ կուսակցության շահերի սպասարկողը:
- Կոչ ենք ուղղում ողջ հայկական սփյուռքին, ՀՀ հետզհետե առողջացող պայմաններում առավել ներդրում ունենալ Հայաստանի տնտեսական, հասարակական և սոցիալական ոլորտների զարգացման գործում, որոշակի քայլեր ձեռնարկել ինչպես հավաքական, այնպես էլ անհատական շահերի համախմբման եւ միավորման համար: Այս ամենի իրականացման համար սփյուռքը պետք է Հայաստանին տրամադրի իր ունեցած մասնագիտական եւ մարդկային ներուժը, հատկապես տնտեսական, ինչպես նաև ծառայողական, գործընթացների օպտիմալացման եւ գիտական հետազոտությունների ոլորտում, աջակցելով Հայաստանում ընթացող սոցիալ-քաղաքական փոփոխություններին:
- Երիտասարդության հարցը Սփյուռքում շարունակելու է մնալ ԵՀՀ-ի

հիմնահարցերից մեկը, հետևաբար կոչ ենք ուղղում Սփյուռքի բոլոր կառույցներին առանձնակի ուշադրություն դարձնել երիտասարդության հարցերին, իսկ երիտասարդությանը կոչ ենք ուղղում անվարան մասնակցել Սփյուռքի ինքնակազմակերպման և Հայաստանին գորակցելու աշխատանքներին:



Համաժողովը վերոնշյալ հարցերի լուծման ուղղությամբ և գործնական քայլերի մշակման եւ իրագործման համար ձևավորում է համապատասխան մարմիններ եւ հանձնախմբեր:

Եվրոպայի Հայերի Համագումար contact@aaeurop.com

